**Արձանագրություն N02**
**ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/02 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման նիստի**

Գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 շ. 11.06.2025թ.
ժամը՝ 10:00
Նիստին մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ Հ. Մելքումյան
Անդամներ՝ Մ. Սարիբեկյան , Մ. Հովհաննիսյան,
Քարտուղար՝ Ա. Գարսևանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հ. Մելքումյան
Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

2. Տեղեկատվություն հայտերի բացման և գնահատման նիստի վայրի, օրվա, ժամի մասին

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ Ակունքի համայնքապետարանի վարչական շենքում, 2025 թվականի հունիսի 11-ին ժամը 10:00-ին:

3. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Հայտ են ներկայացրել՝

| | ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ, ՀԵՌԱԽՈՍ, ԷԼ. ՓՈՍՏ |
|---|---|---|
| 1 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Երևանյան փող. 13<br>Հեռ. (+374)96595010, architools@mail.ru |

4. Տեղեկություններ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգին համապատասխանության մասին

Հ. Մելքումյան
Ծրարները կազմվել են մրցույթի հրավերով սահմանված կարգին համապատասխան
Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

5. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Հ. Մելքումյան
Մասնակիցների ներկայացրած հայտում առկա չեն ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/02 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված հետևյալ փաստաթղթերը.

ա/ **նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր,**
**բ/հանձման-ընդունման արձանագրությունների, ակտերի, հաշիվ ապրանքագրերի պատճեններ**

**գ/ ա) աշխատակազմում ներգրավված լինելու փաստը արձանագրող առնվազն 5 հոգուց բաղկացած անձնակազմ՝ առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով:**

1. **Համաձայն հրավերի 8-րդ կետի 8.8-րդ ենթակետի,**այն է հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների՝ հրավերի պահանջների նկատմամբ, մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը և առաջարկվել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

2.Հանձնաժողովի քարտուղարին՝ մանակցին ծանուցել մեկ օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

6. Տեղեկություններ նախահաշվային գների, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների և զբաղեցրած տեղերի մասին

Հ. Մելքումյան

ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

| Չ/հ | Աշխատանքի | | Տվյալ աշխատանքի համար հայտ ներկայացրած մասնակիցների |
|---|---|---|---|
| | | | Անվանումները/ գնային առաջարկները |
| | անվանումը | Նախահաշվային գինը | **«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ** |
| 1 | **Ակունք բնակավայրի մշակույթի տան մեծ դահլիճի հիմնանորոգման, անհրաժեշտ գույքի ձեռքբերման նախագծանախահաշվայի փաստաթղթերի պատրաստում** | 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ | 2 400 000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը,օրը և ժամը

Հ. Մելքումյան

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/02 ծածկագրով մրցույթի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրը՝ 2025թվականի հունիսի 12-ին ժամը 10:00-ին, հասցեն Ակունք համայնք գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 72:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/02>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Գարսևանյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ Հ. Մելքումյան ____________

Անդամներ՝

Մ. Հովհաննիսյան ____________

Մ. Սարիբեկյան ____________

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան ____________